Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի 2023 թվականի հունիսի 12-ի և լրումն 2023 թվականի հունիսի 15-ին ներկայացված դիմումների ուսումնասիրության հիման վրա վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման վերաբերյալ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, վարույթի հարուցման փուլում քննարկման առարկա դարձնելով դիմումի բովանդակությանը ներկայացվող պահանջները, իրավասու է հարուցել վարույթ, երբ **դիմումի** առարկայի շրջանակներում հանգում է վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացող խախտման **առերևույթ առկայության հաստատմանը**:

Տվյալ պարագայում դիմումատուն գտել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձն առևտրային կազմակերպությունում ունեցած իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնել «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջների խախտմամբ՝ որպես փաստարկ վկայակոչելով վերջինիս տարեկան հայտարարագրում՝ հավատարմագրային կառավարչի վերաբերյալ հայտարարագրված ֆիզիկական անձ հանդիսանալու հանգամանքը:

Հանձնաժողովը դիմումով բարձրացված հարցերը գնահատելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ անհամատեղելիության պահանջների սահմաններում, եզրահանգել է, որ պաշտոնատար անձի կողմից ներկայացված տարեկան հայտարարարագում նշված կառավարչի վերաբերյալ տվյալը ներկայացված է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստիև վերջինիս արարքում առկա չէ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 02-ԴՄ/2023

ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 16 հունիսի 2023թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ա. Փաշինյանի, Մ. Գալստյանի, Լ. Ալեքսանյանի, (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի դիմումները, **պարզեց**.

Դիմումի բովանդակությունը և պահանջը

2023 թվականի հունիսի 12-ին Հանձնաժողովում առձեռն ստացվել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի 2023 թվականի հունիսի 12-ի դիմումը:

2023 թվականի հունիսի 15-ին Հանձնաժողովում առձեռն ստացվել է Տիգրան Պետրոսյանի դիմումը՝ ի լրումն 2023 թվականի հունիսի 12-ի դիմումի, որով վերջինս հայտնել է, որ իր 2023 թվականի հունիսի 12-ի դիմումով ներկայացված պահանջը պնդում է միայն այն մասով, որ «Էյ էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում Գրիգոր

Մինասյանի ունեցած բաժնեմասը ***հավատարմագրային կառավարման է հանձնվել «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասի խախտմամբ***, և խնդրել է վարույթ հարուցել միայն այդ մասով:

Դիմումատուի վերոնշյալ պահանջի շրջանակներում 2023 թվականի հունիսի 12-ի դիմումում նշվել է, որ՝

1. Գրիգոր Մինասյանի կողմից Հանձնաժողով ներկայացված 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում (այսուհետ՝ ***տարեկան հայտարարագիր***) տվյալների համաձայն՝ վերջինիս կողմից «Էյ էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում ունեցած իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնվել 2022 թվականի հունվարի 14-ին Նարինե Սարգսյան անուն ազգանունով անձի:

2. Դիմումատուն բարձրացրել է այն հարցը, որ նշված հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ պայմանագիրը կնքված չէ **օրենքով սահմանված կարգով**, քանի որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասի կարգավորումներից բխում է, որ գույքի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները, մինչդեռ, ըստ դիմումատուի, Նարինե Սարգսյան անվամբ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև առևտրային կազմակերպություն առկա չէ:

Վերոնշյալով պայմանավորված՝ դիմումատուն պահանջել է Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի նկատմամբ հարուցել համապատասխան վարույթ՝ վերջինիս կողմից իր պաշտոնի հետ անհամատեղելի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի պահանջի խախտման կապակցությամբ:

Ըստ դիմումատուի պահանջի՝ գործով պարզաբանման ենթակա հարցերը.

1) Արդյո՞ք ***տարեկան հայտարարագրում*** ներկայացված՝ «Էյ էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում Գրիգոր Մինասյանի ունեցած բաժնեմասի

հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ 2022 թվականի հունվարի 14-ի պայմանագիրը կնքվել է օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ հիմքերի, վարույթ կարող է հարուցվել յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա:

4. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ.

5. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց

տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների **առերևույթ խախտումների**, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում **հարուցում է համապատասխան վարույթ**:

6. Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

7. **Մինչև *02.01.2023 թվականին*** ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքի գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

8. **Մինչև *02.01.2023 թվականին*** ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքի գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ***հանրային պաշտոն զբաղեցնող անձի*** և հանրային ծառայողի ունեցած ***բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող է լինել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող քաղաքացին կամ ոչ առևտրային կազմակերպությունը***:

9. «Հանրային ծառայության մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման

համարը, հասցեն, որում հայտարարատու պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման, կամ **հավատարմագրային կառավարչի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը**, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, պայմանագրի գործողության ժամկետը:

Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

10. Վերոնշյալ իրավակարգավորումների բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը իրավասու մարմնին պարտավորեցնում է դիմումի հիման վրա վարույթ հարուցելու հարցի լուծմամբ գնահատել դիմումի առարկան (պահանջը)՝ ելնելով Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, որի արդյունքում միայն իրավասու վարչական մարմինն իրավունք ունի որոշում կայացնել համապատասխան վարույթ հարուցելու կամ մերժելու մասին:

11. Մեկնաբանելով Հանձնաժողովի կողմից դիմումի առնչությամբ որոշում կայացնելու լիազորությունները՝ ՀՀ Վարչական դատարանը թիվ ՎԴ/1836/05/20 վարչական գործով 2021 թվականի ապրիլի 27-ին կայացված՝ օրինական ուժի մեջ մտած վճռով, մասնավորապես, գտել է, որ Հանձնաժողովը վարույթի հարուցման փուլում քննարկման առարկա է դարձնում դիմումի բովանդակությանը ներկայացվող պահանջները, որի շրջանակներում է հանգում վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացող դեպքի **առերևույթ առկայության հաստատմանը**:

12. Դիմումի առնչությամբ որոշում կայացնելու համար վերը նշված իրավակարգավորումների շրջանակներում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ դիմումի բովանդակությանը և պարզել, թե արդյո՞ք դիմումով նշված՝ պաշտոնատար անձի կողմից դրսևորված վարքագծի պահին գործող իրավակարգավորումների շրջանակներում ***առերևույթ առկա է համապատասխան արարք (դեպք),*** որը ենթակա է գնահատման Հանձնաժողովի կողմից:

13. Տվյալ պարագայում, ուսումնասիրելով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի դիմումով բարձրացված հարցերը, Հանձնաժողովն արձանագրում է, որ վերջինիս կողմից սկզբնապես բարձրացված հարցերը սույն գործով քննարկման առարկա չեն հանդիսանում՝ հիմք ընդունելով Տիգրան Պետրոսյանի կողմից դիմումից մասնակի հրաժարվելու մասին լրացուցիչ դիմումը: Սույն գործով դիմումատուն գտնում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձի առևտրային կազմակերպությունում ունեցած իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնվել «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասի խախտմամբ՝ որպես փաստարկ վկայակոչելով վերջինիս տարեկան հայտարարագրում՝ հավատարմագրային կառավարչի վերաբերյալ հայտարարագրված ֆիզիկական անձ հանդիսանալու հանգամանքը, ուստիև, հավատարմագրային կառավարիչը ***չի հանդիսանում անհատ ձեռնարկատեր, կամ առևտրային կազմակերպություն***, *ինչը հանդիսանում է օրենքի պահանջների խախտում:*

14. Դիմումատուի պահանջի առնչությամբ որոշում կայացնելու համար սույն գործի շրջանակներում Հանձնաժողովը՝ անդրադառնալով դիմումի առարկային, անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյո՞ք *2022 թվականի հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար* գործող իրավակարգավորումների շրջանակներում Գրիգոր Մինասյանի տարեկան հայտարարագրում նշված՝ «*Էյ էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում իր ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ պայմանագիրը կնքվել է օրենքի պահանջներին համապատասխան*:

Հետևաբար, Հանձնաժողովը դիմումով բարձրացված հարցերը գնահատում է իրավահարաբերության ծագման պահին գործող «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների սահմաններում:

15. Հաշվի առնելով դիմումատուի կողմից ներկայացված պահանջի հիմքով վկայակոչված հանգամանքը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել Գրիգոր Մինասյանի կողմից իր ***բաժնեմասը հավատարմագրային***

կառավարման հանձնելու վերաբերյալ պայմանագրի կնքման ժամանակ գործող օրենսդրական պահանջները:

Այսպես, *2022 թվականի հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար գործել են* մինչև ***02.01.2023 թվականին*** ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքի գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածով սահմանված պաշտոնի անհամատեղելիությանը վերաբերող իրավակարգավորումները, այդ թվում՝ նույն հոդվածի 31-րդ հոդվածով սահմանված դրույթները: Նշվածով պայմանավորված՝ դիմումատուի կողմից բարձրացված փաստարկի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Գրիգոր Մինասյանի կողմից 2022 թվականի հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար ներկայացված տարեկան հայտարարարագում նշված կառավարչի վերաբերյալ տվյալը ներկայացված է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստիև վերջինիս արարքում առկա չէ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում:

Համադրելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի կողմից ներկայացված դիմումի բովանդակությունը, դրանում բարձրացված հարցերը և վերոնշյալ իրավական նորմերը, Հանձնաժողովը եզրահանգում է, որ դիմումով ներկայացված հարցերի կապակցությամբ առկա չեն վարույթի հարուցման հիմքեր:

Հաշվի առնելով վերոգրյալը, և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 1-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի կողմից 2023 թվականի հունիսի 12-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Տիգրան Պետրոսյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**